



ԴԻՄՈՒՄԻ ԿՈՉ

ԳԱԼՈՒՍՏ ԿԻԼՊԵՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ
ԿԸ ՄԵԿՆԱՐԿԵ **ԽՕՍՔ ԱՌ** ՄՐՑԱՆԱԿԸ

ԽՕՍՔ ԱՌ մրցանակը աշխարհասփիռ հայախօսներուն առիթը կ'ընծայէ **հայերէնով** արծարծելու այն **հիմնահարցերը**, որոնց դէմ **յանդիման** կը գտնուի **մարդկութիւնը** այսօր:

Պսակաձեւ ժահրը կը ստիպէ որ միլիոնաւոր հայեր մեկուսանան: Այս պայմաններուն, համացանցը եւ տարբեր ընկերային առցանց հարթակներ հաղորդակցութեան ազդեցիկ միջոցներ դարձած են: Շատեր կը դիմեն այս ձեւերուն՝ ստեղծելով արտայայտչական նոր մշակոյթ մը: Այս շրջարկին մէջ, Հայկական Բաժանմունքը կը յայտարարէ **լսատեսողական եւ գրական արտադրութեան մրցանակ մը՝ ԽՕՍՔ ԱՌ**, հրաւիրելով բոլորը ստեղծելու նիւթեր, որոնք կանդրադառնան աշխարհին վերաբերող հիմնահարցերու, ինչպէս նաեւ կը միտին հասարակութիւնը իրազեկելու եւ քաջալերելու որ այս նիւթերուն մասին արտայայտուին ու լուծումներու շուրջ մտածեն:

Հայկական Բաժանմունքի տնօրէն, Ռազմիկ Փանոսեանի խօսքերով. «Հարկաւոր է խօսիլ մարդկութեան վերաբերող ժամանակակից հիմնահարցերու մասին, որոնք անյապաղ կանդրադառնան նաեւ աշխարհասփիռ հայուն վրայ. օրինակ՝ կենսոլորտի աղէտը, գաղթականներու ճգնաժամը, յարատեւ պատերազմները, համայնքային մարտահրաւերները եւ այլն: Այս մրցանակով կը հետապնդենք երկու նպատակ. նախ՝ քաջալերել որ իբր համայնք խօսուի մարդկութեան դիմակայած դժուարութիւններուն մասին, ապա խթանել որ այս քննարկումները տեղի ունենան հայերէնով, եւ զանազան առկայ միջոցներով»:

Եթէ կ'ուզէք աշխարհին դիմել հայերէնով, անդրադառնալու հիմնահարցի մը, ապա ասիկա լաւագոյն առիթն է. կը հրաւիրենք ձեզ ներկայացնելու **լսողական, տեսողական, գրաւոր**, կամ **գծանկարչական** նիւթեր:

Մրցանակառուները պիտի ստանան 500 տոլար արժողութեամբ պարգեւ մը: Պիտի յատկացուի ընդհանուր 50 մրցանակ:

Մրցանակին պայմաններուն եւ դիմումի չափանիշերուն մասին յաւելեալ մանրամասնութիւններու համար **հետեւեցէք այս կապերուն՝ [հայերէն տարբերակ](#) կամ [անգլերէն տարբերակ](#):**

Դիմումները եւ հարցումները պէտք է ուղղուին՝ **ArmCurrentIssuesPrize@gulbenkian.pt** հասցէին, մինչեւ **8 յունիս 2020**:

Այս յայտարարութիւնը անգլերէն կարդալու համար սեղմեցէք **[hnu](#)**: